

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՎ ԼՍՍԱՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՄՓՅՈՒՌԱՆԻՄ (1981 թ.)

Ր Ո Ւ Լ Ղ Ա Ր Ի Ս

Պլուզիլի «Երևան» միության վարչությունը կազմակերպել է իր հերթական դասախոսությունը՝ նվիրված Ավետիք Իսահակյանի կյանքին և ստեղծագործությանը (գեղուցող Զարիկ Ղաղարոսյան)։

«Նոր օր», 24 ապրիլի 1981

«Կանչ» շաբաթաթերթը տպել է բուլղարահայ «Երևան» միության վարչության նախագահ Տիրան Բարիկյանի հետ ունեցած հարցադրույցի տեքստը։ Բարիկյանը նշել է, որ «Երևան» մշակութային միության մասնաճյուղերի թիվը այսօր հասնում է 15-ի։ զրանք բոլորն էլ ունեն իրենց ակումբներն ու գրադարանները, որտեղ պահվում են 20—30 հազար կտոր հայերեն գրքեր, պարբերականներ, հավաքածուներ։ «Երևան» կազմակերպությունը մեծ աշխատանք է կատարել հայ մշակութի պրոպագանդման, հայ-բուլղարական հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ, սերտ կապեր է հաստատել Բուլղարիայի նշանավոր արվեստագետների, մշակութի գործիչների հետ։ Գեղարվեստական ինքնագործունեության խմբերում 600-ից ավելի մարդ է ընդգրկված։

«Երևան» միության նախաձեռնությամբ Հայաստանի տասնյակ արվեստագետներ, մտավորականներ, պետական և հասարակական գործիչներ հնարավորություն են ստացել հաճախ հանդես գալու Բուլղարիայի քաղաքներում։ Միության բաղմամբ ինքնագործ խմբեր այցելել են Սովետական Հայաստան։ «Երևան» միությունն ունի նաև իր շաբաթաթերթը, որի առաջին համարը լույս է տեսել 1944 թ. հոկտեմբերի 24-ին։ Հայերը ակտիվորեն մասնակցում են Բուլղարիայի հասարակական, գիտական ու մշակութային կյանքին։

«Կանչ», 1 օգոստոսի 1981

Սոֆիայի «Նարոդնա կուլտուրա» հրատարակչությունը «Գաղաթյանը սովետական պոեզիայի» մատենաշարով հրատարակել է Ավետիք Իսահակյանի «Ընտիր բանաստեղծություններ և պոեմներ» հատորը բուլղարերեն։ Ընտրությունն ու տողացի թարգմանությունը կատարել է Կարո Հայրապետյանը, ղեղարվեստական թարգ-

մանությունը՝ Պետր Ալիբեկը և Տիմո Պոլյարովը։ Հատորը բաղկացած է 400 էջից, ունի նախաբան, տված է Ավ. Իսահակյանի կյանքը տարեթվերով։ Գրքում ընդգրկված են «Ալագյալի մանիններն» ու «Աբու լալա Մահարին», 13 առակ, 12 լեզունդ ու բալլադ և 191 բանաստեղծություն։ Խմբագիրն է Վասիլկա Հինգովան, նկարիչը՝ Իվան Տիմովը։

«Արև», 14 սեպտեմբերի 1981

Բուլղարիայի «Հայրենական ճակատ» հրատարակչությունը լույս է ընծայել Սոֆիային նվիրված մի ժողովածու, որում ի թիվս այլ նյութերի տեղ են գտել նաև XVII դարի հայ տաղերգու Մարտիրոս Ղրիմեցու տասը բանաստեղծությունների բուլղարերեն թարգմանությունները՝ առաջաբանով և գիտական ծանոթագրություններով։

Մարտիրոս Ղրիմեցին հաճախ է ճանապարհորդել 1673—75 թթ. նա մի քանի անգամ այցելել է Բուլղարիայի Բաբադաղ, Վառնա, Օդրին, Անխիալո-Պոմորիե, Բուրգաս, Սոֆիա քաղաքները։ Այդ տարիներին գրված նրա մի շարք տաղեր հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում հիշյալ քաղաքների, նրանց բնակիչների վարք ու բարքի, ինչպես նաև տեղի հայերի մասին։

«Հայրենիքի ձայն», 4 նոյեմբերի 1981

Ր Ո Ւ Մ Ի Ն Ի Ա

«Արարատում» տպագրված է պրոֆ. դոկտոր Վիրճիլ Քրետեայի հոդվածը՝ նվիրված Վլադ Բրենցյանուի ծննդյան 80-ամյակին (մահացած 1963-ին)։ Հոդվածում բերված են հակիրճ տրվյալներ ակադեմիկոս բանասերի և հայագետի կենսագրության վերաբերյալ, նշվում է, որ նա 1938—1941-ին հիմնել և մի քանի տարի ղեկավարել է «Ռեվիլու դեզ էտյուդ ինդո-էրոպեն» պարբերականը, աշխատակցել է ռումինական հանդեսներին, «Հանդես մասօրյային», «Պատմա-բանասիրական հանդեսին», եղել է վերջինիս խմբագրական կոլեգիայի անդամ և այլն։ Նա ուսումնասիրել է նաև հայ ժողովրդի ծագման հարցը։ Եղել է Ռումինիայի Արևելագիտական ընկերության առաջին նախագահը (1956—

1963) և «Սթուտիա է աբթա օրիանթալիա» հանդեսի խմբագիրը (1958—1963):

«ԱՐԱՐԱՏ», 21 հունվարի 1981

Մայիսի 19-ին տեղի է ունեցել հանդիսավոր նիստ՝ նվիրված «Կարապետ Իսկրիլյանու» զրական-ղեղարվեստական խմբակի միամյակին և ուսման հայ ականավոր զրաբնադատ Կարապետ Իսկրիլյանուի ծննդյան 110-ամյակին:

Խմբակը հիմնվել է 1980 թ. մայիսի 23-ին, Կ. Իսկրիլյանուի ծննդյան օրը: Խմբակի նպատակն է հղել Ռուսարեստի հայ համայնքի համար կադմակերպել մշակութային միջոցառումներ: Մինչ այժմ անց են կացվել մշակութային զանազան հարցերի վերաբերյալ զրույցներ, զրականություն, երաժշտության բնագավառի դասական ներկայացուցիչների հորեկանական հանդիսություններ, երիտասարդ զրույցների անտիպ ստեղծագործությունների և նոր լույս տեսած գրքերի քննարկումներ:

Նիստին Կ. Իսկրիլյանուի կյանքի և ստեղծագործության մասին խոսել է ուսմանցի զրաբնադատ, խմբակի պատվավոր նախագահ, Իսկրիլյանուի աշխատությունների լրիվ տասհատորակի հրատարակիչ Ալեքսանդրու Փիրուն: Ելույթներ են ունեցել նաև Տ. Յ. Սուբյանուն, Կրիկորե Պուրտան և խմբակի ղեկավար Սարգիս Սևլյանը, որը ծանոթացրել է խմբակի մեկ տարվա գործունեությանը:

«ՆՈՐ ԿՅԱՆԷ», 29 մայիսի 1981

Ռուսարեստի Երիտասարդության զրադարանի սրահում հունիսի 30-ին տեղի է ունեցել հավաքույթ՝ նվիրված նոր լույս տեսած «Հայ դասական ու ժամանակակից բանաստեղծությունների հավաքածո» հատորին: Ելույթներ են ունեցել հատորը պատրաստողները. «Միներվա» հրատարակչության խմբագիր Նիկոլան Թեյքը, որն ասել է, թե «Սասունցի Դավթի» ուսմանը հրատարակությունից հետո (որի թարգմանիչն ինքն է) «ներկա դիրքի կարևորագույն իրադարձություն մը կհանդիսանա Ռուսմանիո մեջ հայ բանաստեղծության ժողովրդականացման տեսակետ»: Այնուհետև գնահատել է թարգմանիչների աշխատանքը, ներածականի բովանդակային բնույթը՝ և ընդարձակ կենսագրական ծանոթագրությունները: Բանաստեղծ Տիմիթրու Մ. Յոն, որը հրատարակության նախաձեռնողն է, խոսել է թարգմանչական աշխատանքի մասին և զուգույն է Հայաստանի զրույցների միության օժանդակությունը: Բանաստեղծուհի Փարոլինա Իլբան խոսել է իր թարգմանությունների մասին:

Առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ Սարգիս Սևլյանը անդրադարձել է հատորի բովանդակությանը, նշելով, որ հավաքածուն «թերևս իր տեսակին մեջ ըլլա արտասահմանի

մեջ օտար լեզվով հրատարակված ամենն լայնածավալ գիրքը»:

Վերջում մի շարք զերասաններ և երիտասարդներ կարդացել են ուսմանը թարգմանած բանաստեղծությունները և զրանց հայերեն բնագրերը:

«ՆՈՐ ԿՅԱՆԷ», 10. 17 հուլիսի 1981

Լ Ե Ն Ա Ս Ս Ա Ն

Կրակովում տեղի է ունեցել հայագիտության հարցերին նվիրված նստաշրջան, որը կազմակերպել է 1980 թ. հիմնված «Հայ մշակույթի բարեկամների միությունը»: Նստաշրջանին մասնակցել են լեհաստանի տարբեր վայրերից հրավիրված մոտ 300 լեհեր և լեհահայեր: Կարդացվել են հետևյալ զեկուցումները. «Լեհահայաց պատմությունը» (զեկուցող՝ լեհահայաց եկեղեցու պատմության մասնագետ Չեսլավ Լեխիցկի), «Լեհահայաց ծագումնաբանությունն ու զինանշանները» («Հայ մշակույթի բարեկամների միություն» նախագահ Միշալ Պոդոսեկ), «Հայերը լեհական միջավայրում՝ ըստ լեզվի բենեդիկտյան հայուհիների վանքի ժամանակագրության» (Հենրիկա Աուգուստինովիչ-Չիլերսկայա), «Հայաց լեզվի և գրականության ծանոթությունը լեհաստանում XIX—XX դդ. (Անջել Պիսովիչ)»: Արվեստաբան Ստանիսլավ Բոբերը զեկուցել է լեհահայ նշանավոր նկարիչ Թեոդոր Աքսերովիչի (1859—1933) մասին: Նստաշրջանը բացվել է լեհահայ նկարիչ Տագեուշ Լուկասևիչի զուցահանդեսով, ապա տեղի է ունեցել զրական-երաժշտական երեկո, որի ժամանակ հնչել են Կոմիտասի երգերը և կարդացվել են հայ բանաստեղծների գործերը:

Վերջում երաժշտագետ Ջեքսե Կոսցլովը կարդացել է «Լեհական տարրերը լեհահայ երաժշտության մեջ» զեկուցումը, որից հետո տեղի է ունեցել մտքերի փոխանակություն:

«ԵՐԼԱՆ», 24 հունվարի 1981

Լ Ի Բ Ա Ն Ա Ն

Հունվարի 21-ին Բելրուսում մահացել է Ռամկավար Աղատական կուսակցության ղեկավարներից, «Զարթոնք» թերթի երկարամյա խմբագիր Գերսամ Ահարոնյանը: Ահարոնյանը ծնվել է 1915 թ. Մարաշում, կրթություն է ստացել Մեկրոնյան կրթական հաստատությունում: 1937-ից մինչև Լիբանանի քաղաքացիական պատերազմի առաջին տարիները՝ 30 տարուց ավելի, խմբագրել է Ռ. Ա. Կ. պաշտոնաթերթ «Զարթոնքը»: Հեղինակ է «Մեծ երազի ճամբուն վրա» (1964), «Խոհեր հիսնամյակի ավարտին» (1966), «Հուշամատյան Մեծ եղեռնի» և այլ գրքերի:

«ԶԱՐԹԱՆԷ», 21 հունվարի 1981

Ինչու՞ թուում լույս է տեսել լիբանանահայ և օտար մամուլի հայկական նյութերի 1978 թ. «Մատենագիտությունը»: Հատորում տեղ են գտել հայոց հին և նոր սյամուսթյանը, մշակույթին վերաբերող նյութեր: «Մատենագիտությունը» բաղկացած է տասնհինգ բաժիններից՝ գրականություն, արվեստ, պատմություն, մամուլ, հրապարակախոսություն և այլ: Երևան, հրատարակչություն 1981:

«Հայրենիքի հայն», 20 մայիսի 1981:

Վերջերս լույս է տեսել Սիսակ Վարժապետյանի «Հայերը լիբանանի մեջ» բազմահատորյալի երկրորդ հատորը: Այդ կապակցությամբ հեղինակի հետ ունեցած հարցալույցը տպագրված է «Զարթոնքում», որից տեղեկանում ենք, որ իր այդ աշխատությունը բաղկացած է լիսնյու չինգ հատորներից, որոնցից երկուսը լույս են տեսել, իսկ երրորդը տպագրվում է: Ինչպես նշում է Ս. Վարժապետյանը, լիբանանի ունի մոտ 225.000 հայ բնակչություն, շուրջ 70 կրթական հաստատություն, 35 եկեղեցի, բազմաթիվ միություններ և հրատարակություններ: Այս բոլորը անհրաժեշտություն դարձրին գրելու լիբանանահայ գաղութի պատմությունը, նշում է հեղինակը:

«Զարթոնք», 3 հունիսի 1981

Հ Ն Դ Կ Ա Ս Ս Ա Ն

Դելիում «Լիբանանյանը» բուկ տրաստ» հրատարակությունը լույս է ընծայել «Հայկական կարճ պատմվածքներ» խորագրով ժողովածուն անդրեն: Ներածականի հեղինակն է մադրասցի ականավոր գրող Աշոկամիտրանը: Նա հատաբերի տեղեկություններ է հայտնում Հրեկականստում դեռևս 300 տարի առաջ բնակություն հաստատած հայերի մասին, որոնք ակտիվորեն մասնակցել են Հնդկաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին ժողովածուն ունի առաջաբան, որը գրել է գրականագետ Դ. Գասպարյանը: Գրքում ներկայացված են Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Վ. Թոթովենցի, Ա. Բակունցի և մի շարք այլ գրողների պատմվածքները Ա. Մախուլյանի և Ֆ. Գալգուլայի թարգմանությամբ: Հնդկաստանի մամուլը արձագանքել է գրքի տպագրությանը: Մագրասում լույս տեսնող «Սանդի ստանդարտ» թերթի 1981 թ. հունիսի 7-ի համարում ասված է. «Սա հայկական նովելների անթոլոգիա է: Ուրախ տրամադրություն և հուզմունքներ է արթնացնում գիրքը ընթերցողների մեջ: Բարդ կառուցվածքով, բայց աշխույժ այս պատմվածքները հմտորեն դիպչում են մարդու ամենադժգույն լարերին, մտնում նրա ներաշխարհը, հուզելի, կարոտի, ապրումների աշխարհը՝ Հայաստանի և Հնդկաստանի միջև եղած դարավոր կապերի շնորհիվ:

Հնդկաստանի շատ բան կա Հնդկաստանի և Հայաստանի միջև: Մի հնդիկ գրող արժան է տպավորվել այս գրքից, որ ասել է. «Այս պատմվածքներից հետո մարդու մեջ խոր ցանկություն է առաջանում համփոփել Հայաստանում, Ալեքսանդրի մարդիկ բարի են, խելացի, աղնիվ և սիրում են կյանքը»:

«Գրական լեռ», 27 նոյեմբերի 1981

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

«Արև» օրաթերթում տպագրված է Լոնդոնի թիքեյան մշակութային միության «Էրեբունի» ամսաթերթի ներկայացուցչի հարցազրույցը Թուրքիայի հայոց պատրիարք Տ. Շնորհարարի հետ, որն ի միջի այլոց հայտնել է. «Երբ դառնում եմ մասին կիսսինք, պետք է հրատարակում րոն թի նախկին հայկական գավառներում մեջ՝ Վան, Մուշ, Պիթիս, Նրդում, Կարս և այլն հրեք հայություն գոյություն չունի, ինչպես նաև Կիլիկիո մեջ հայություն չէ մնացած: Ո՛չ Ադանա, ո՛չ Մարաշ, ո՛չ Ալեքսանդ. Զեյթունի անունը անգամ գոյություն չունի: Մերսինի մեջ բանի մը ընտանիք հայեր կան: Այնպես որ, հրե գավառ կրենք, առհասարակ պետք է հասկնալ Կեսարիա, Սվադ, Մալաթիա, էլ Ագար, Տիարպեթի շրջանը, Մարտինի նահանգը և Անգարայի մեջ: Գաստամանայի մեջ Սև ծովու եզերքը կըն. այստեղերը քիչ մը հայեր մնացել են, բայց Եփրատեն արևելք, բաշի հարբերդի շրջանեն հայեր չեն մնացած:

Կարծենք, թե այս գավառներում մեջ ներկայիս կա մոտ 10.000—20.000 հայություն, իսկ Պոլսո մեջ մոտ 45.000 է թիվը հայերուն: Գավառներում մեջ կյանքը ծանր է... տեղական տարրերը ազատ կզգային հայերու գույքերը— ոչ իսար, հունձը ևլն գողնալու և մինչև իսկ աղջիկներու վրա ձեռք դնելու, այնպես որ այս գավառի հայերը նեղ կացության մեջ ապրելով սլարտավորված կզգային գաղթելու. անոնք կամ Պոլիս պետք է գան կամ արտասահման գաղթեն:

Պոլսո մեջ ասանկ դժվար կացություն չկա, բայց հոս ալ կան համայնքային մտահոգություններ և դժվարություններ, մասնավորաբար կալվածական և ուսումնական մարզերում մեջ»:

«Արև», 20, 21 նոյեմբերի 1980

Վանից 30 կմ հեռու գտնվող Զավուշթիկի շրջանում հնագետները հայտնաբերել են ոտ հուշարձաններ: Պեղվել է ուրարտական բերդ, որում գտնվել է շումերների ժամանակի մի մասն, բեռագիր արձանագրություններով:

Հնագետները գտնում են, որ նորահայտ արձանագրությունները դիտական կարևոր նշանակություն ունեն:

«Նոր օր», 16 հոկտեմբերի 1981

Մտամբույի «ՕՏԱ» մանկական գրքերի հրատարակությունը լույս է ընծայել Հովհաննես Բանասիրի «Գիրքորը» թուրքերեն, «Ապրիլ կույս» վերնագրով: Թարգմանությունը կատարել է արդ թովմասյանը, որը գրել է նաև Հովհաննասյանի մասին համառոտ ներածական: Նկարիչն է Մուսթաֆա Տելիօղլուն:

«Շարժում», 29 ապրիլի 1981

Ա. Ն.

«Արարատ» թերթը հայտնում է, որ Թեհրանի կրթական մինիստրությունը շրջաբերաբար է ուղարկել դպրոցներին, որով արգելվում էր դպրոցներում սովորել աղգային լեզուն: «Կրոնական փոքրամասնությանը դաստիարակությունը դպրոցներում մեջ կարելի չէ...» ասելով, որ դպրոցներում սովորելը միայն իսլամական հանրապետության պաշտոնական լեզուն է:

«Արարատ», 12 դեկտեմբերի 1981

Ա. Ն. Ս. Ի. Ա.

Արսելի Սեն-ժուլիեն արվարձանում 1980 թ. դեկտեմբերի 13-ին տեղի է ունեցել «24 ապրիլ 1915» պողոտայի բացումը, որին ներկայացել է Մարսելի քաղաքապետ Կասթրո Տրեֆերը, արապետական խորհրդի անդամները, Մարսելի բոլոր հայ կաթոլիկությունների ներկայացուցիչները և այլն:

«Զարբանգ», 18 հունվարի 1981

Արսելի Շամպր տը Քոմբերս-ի սրահում 1981 թ. 20-ին տեղի է ունեցել հայկական տարապետության ցուցահանդեսի հանդիսությունը բացումը ֆրանսիացի և հայ բազմունքի ներկայությամբ:

Ցուցահանդեսը, որ կազմակերպել է Մարսելի Հայ մշակույթի տունը՝ Միլանի պրոֆ. Ալեքսանդր Նոյմեյսթրի ղեկավարությամբ գործող Նոյմեյսթր Սթուդիո տոբոմենթալիստի տեղադրությամբ «Արմենա» կենտրոնի գործակցությամբ, տարիներ ի վեր ներկայացվել է Խոստում, Ամստերդամ, Շվեյցարիայում, Հալանդում, Ամստերդամ, Իրանում, Բելգիայում և այլուր, ամեն տեղ մեծ հաջողություն ունենալով:

Եղանակներն լայնորեն անդրադարձել են արսելի մամուլին ու հեռուստատեսությունը:

«Նոր օր», 17 փետրվարի 1981

«Արև», 28 ապրիլի 1981

Ն-Մարի Գառլան ֆրանսիական «Historia» ամսագրի 1980 թ. 405 համարում հրատարակել է «Հայ ցեղասպանությունը» խորագրով Հանդես, № 1

հոդվածը, որը թարգմանաբար տպագրված է «Նոր օր» շաբաթաթերթում:

«Զարբանգ» շաբաթաթերթը տպել է այդ հոդվածը հակիրճ ներածականով՝ «Պատմության բեմ» ենթավերնագրով:

«Զարբանգ», 27, 28 դեկտեմբերի 1980

«Նոր օր», 22 մայիսի 1981

Փարիզի «Լա Փանսե ունիվերսել» հրատարակությունը լույս է ընծայել Բեատրիս Գասպարյան-Բրիկունի «Հայ իրականությունը XIX դարում» գիրքը:

Հեղինակը ոչ միայն ուսումնասիրել է հայկական տարրեր գաղթականների պատմությունը, ծանոթացել բազմաթիվ լեզուներով հրատարակված պատմական ու գեղարվեստական գրականությանը, որը բերված է գրքի մատենագրական բաժնում, այլև ինքն անձամբ այցելել է Արևմտյան Հայաստան, Կիլիկիա, Իրան, Սովետական Հայաստան, ինչպես նաև եղել է Խուսաստանի հայաբնակ վայրերում: Գրքում նա առանձին գլուխներով ներկայացրել է քաղաքային ու գյուղական կյանքը, ընտանեկան բարքերը, սովորությունները, արվեստը, գրականությունը, եկեղեցական ծեսերը, ժողովրդական տարազն ու զվարճությունները:

Տարիներ առաջ Բեատրիս Գասպարյան-Բրիկունի փարիզում ստեղծել է «Հայկանուշ» կանաչ միությունը, որ պարբերաբար հայ արվեստին ու գրականությանը նվիրված միջոցառումներ են կազմակերպում:

«Գրական քննարկ», 14 օգոստոսի 1981

Իվ Թեոնենը, ու հեղինակն է «Հայեր, ցեղասպանության մը պատմություն» գրքի, ժան Բլոստ Բեպպալճյանի հետ հրատարակել է մի ալբոմ՝ «Հայաստան—1900», որ ղեկավարված են լուսանկարներ, բացիկներ, արխիվային նյութեր:

«Արև», 10 հունվարի 1981

Ա. Ն. Գ. Ի. Ա.

Լոնդոնի Թեքեյան մշակութային միությունը սկսել է հրատարակել «Էրեբունի» ամսագիրը, որի առաջին համարը լույս է տեսել Հոկտեմբերին: Թերթը բաղկացած է 12 էջից:

Հանգանակությամբ հավաքված 80 հազար սթերլինգի գլխավոր նվիրատուն լոնդոնահայ բարերար Կարո Գրիգորյանն է, որը նշանակվել է Թեքեյան մշակութային միության Լոնդոնի մասնաճյուղի պատվավոր և ցկյանս նախագահ: Այդ գումարով միությունը ծրագրել է հիմնադրել նաև մշակութային կենտրոն:

«Զեռնարկներ» «Էրեբունի» ամսագրի հրատարակության, մենք («Էրեբունի» տնօրինությունը) կնպատակադրենք զայն դարձնել լոնդոնահայության ձայնը: Մենք պիտի զբաղվենք

մասնավորաբար դադութն և ընդհանուր առմամբ ամբողջ հայությունը շահագրգռող հարցերով... Մենք կհավատանք հայ ժողովրդի միասնականության, որովհետև մեկ է հայ ժողովուրդը, ուր որ ալ գտնվի Հայրենիքի թև Սփյուռքի մեջ... Մենք կհավատանք նաև, որ Սփյուռքի մեջ հայությունը կրնա գոյատևել միայն եթե ան հաստատ մնա իր հավատքին և նաև տեսնե Մայր Հայրենիքի ներկա իրականությունը իբր գրավականը և կովանը ապագայի մեր բոլոր երազներուն և իրագործումներուն:

«Ջարբոնֆ», 18 դեկտեմբերի 1980

Լոնդոնի Բրիտանական գրադարանի նախաձեռնությամբ բացվել է Հայկական հին տպագրությունների (1512—1800) ցուցահանդես, որում տեղ են գտել Անգլիայի համալսարանների և պետական բոլոր գրադարանների հայկական տպագիր հին դրքերը: Ցուցադրված են նաև XVII դարի երկրորդ կեսին Ամստերդամում տպագրված հայերեն գրքերը, ինչպես նաև Վիեննայի, Զոմբոնում, Էյմիսթենում, Նոր Զուլալում, Կ. Պոլսում, Մադրասում և Կալկաթայում լույս տեսած հայկական արժեքավոր տպագրություններ:

Ցուցահանդեսի բացումը համընկել է Բրիտանական թանգարանի կողմից դոկտ. Վ. Ներսեսյանի «Ցուցակ հայերեն հին գրքերի 1512—1850» ուսումնասիրության հրատարակությանը: Վ. Ներսեսյանը պատրաստել է նաև ցուցահանդեսում տեղ գտած գրքերի և հայկական տպագրության զարգացման մասին համառոտ ակնարկ:

«Արև», 15 դեկտեմբերի 1980

Ա. Վ. ՍՏՐԻԱ

Վիեննայի ազգագրական թանգարանում կազմակերպվել է «Հայաստանի ժողովրդական կիրառական արվեստը» ցուցահանդեսը, որտեղ ներկայացվել են ոսկերչական իրեր, գորգեր, ազգային հագուստ, ժանյակներ, խեցեղեն և դրվագված առարկաներ, երաժշտական գործիքներ և այլն: Ցուցահանդեսում բացվել է նաև լայնֆորմատ գունավոր ֆոտոէքսպոզիցիա, որը պատկերացում է տալիս հայ ժողովրդի կյանքի, էկոնոմիկայի, գիտության ու մշակույթի բնագավառում ձեռք բերած նվաճումների մասին:

Վիեննայի ազգագրության թանգարանի դիրեկտոր Խ. Մանդորֆը SUUU-ի թղթակցին ասել է. «Հայաստանի ժողովրդական կիրառական արվեստը» ցուցահանդեսը բացառիկ մասսայականություն էր վայելում: Ոչ ոքի անտարբեր չթողին եզակի ցուցանմուշները, որոնք ծանոթացնում են Հայաստանի հնադարյան և ժամանակակից մշակույթին»:

«Սովետական Հայաստան», 20 մայիսի 1981

Մայիսի 25-ին Վիեննայի Ավստրիական Ազգային Մատենադարանում բացվել է «Բյուզանդիա և Արևմուտք» ցուցահանդեսը: Առանձին բաժնով ներկայացված են Վիեննայի Մխիթարյան միաբանության կողմից ցուցահանդեսին տրամադրված 38 թանկարժեք հայկական Առապրեր, որոնց մասին հրատարակվել է Բուշ-հաուզենների շահական գրքույկը:

«Արարատ», 12 հունիսի 1981

Վիեննայի Ազգային գրադարանում բացվել է «Մխիթարյանների հայկական ձեռագրերը Վիեննայում» ցուցահանդեսը: Մխիթարյանները պահպանում են հայկական ձեռագրերի մեկ քառորդը: Այս ցուցահանդեսը կազմակերպվել է 1976-ին Մխիթար Սեբաստացու ծննդյան 300-ամյակի առթիվ և գոյատևում է մինչև այսօր: Այնտեղ հայկական ձեռագրերի հետ մեկտեղ ներկայացված են նաև Արիստոտելի ու Պլատոնի գործերի թարգմանությունները:

Մխիթարյանների գրադարանում պահվում են 280 000 հատորներ, հայկական պարբերականների մեծագույն հավաքածուն, 1794-ին Մադրասում լույս տեսած հայկական առաջին պարբերական «Ազդարարը», ինչպես նաև պատմական հետաքրքրություն ներկայացնող նամակներ և այլ նյութեր:

«Նոր կյանք», 20 հոկտեմբերի 1981

Շ. Վ. Դ. Ա.

Շվեդիայում գոյություն ունի ոչ մեծ հազարթոյսա Սյն հիմնականում կենտրոնացած է Ստոկհոլմում և Ուփսալայում, որտեղ հաստատվածների մեծ մասը պարսկահայեր են իսկ Ստոկհոլմում ապրողները գաղթել են Լիբանանից:

Ուփսալայի հայ երիտասարդները կազմակերպել են մշակութային միություն և սկսել են հրատարակել խմբատիպ «Արագիլ» հայկական թերթը, որում տպագրվում են լուրեր քաղաքի հայ համայնքի կյանքից, հայ գրականությանը հասանելիների գրվածքներից և այլն: Միութչունը շարքով մեկ անդամ կազմակերպում է դաստիարակություններ հայ գրականության և պատմության հարցերի շուրջ:

«Հայրենիքի ձայն», 15 ապրիլի 1981

«Շարժում», 10 հունիսի 1981

Ա. Գ. Ն. Տ. Ի. Ա.

Արգենտինայի Հ. Բ. Ը. Միության «Վիլյա Սարոյան» թատերախումբը սեպտեմբերի 7-ին ներկայացրել է Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները»:

«Շարժում», 23 սեպտեմբերի 1981

Բուենոս Այրեսի Արևելյան արվեստից ազգային թանգարանում Հոկտեմբերի 9-ին տեղի է ունեցել «Հայաստան» արվեստ և ավանդություն» ցուցահանդեսի պաշտոնական բացումը, որին ներկա են եղել պաշտոնական անձինք, դեսպաններ, մշակույթի և կրթական նախարարության ներկայացուցիչներ, թանգարանների տնօրեններ, հայ զաղթօջախի ներկայացնող կադմակերպությունների և մամուլի ներկայացուցիչներ:

Ցուցադրվել են արդեն տինահայ զաղթօջախից հավաքած ավելի քան 230 ցուցանմուշներ, հրատարակվել է զրթույկ, որում տրված է ցուցադրված իրերի մանրամասն նկարագրությունը:

«Շարժում», 14 հոկտեմբերի 1981

Ի Ա. Ն. Ս. Գ. Ս.

Սովետական Հայաստանի 60-ամյակի առթիվ Մոսկվայում Մամիկոնյան մշակութային հանձնախումբը կազմակերպել է հանդիսություն-ցուցահանդես, որտեղ ներկայացվել են մեծադիր և զուսավոր լուսանկարներ Հայաստանի բնակչության, տնտեսության, կրթական կյանքի մասին տվյալներ և բարեփոխումներ Բաղմաթիվ անհատներ ցուցադրության համար տրամադրել են հայկական դորդեր, արվեստի գործեր, հուշանմուշներ, զեղեցիկ հրատարակություններ ներկայացվել են նաև հայկական կոնյակի տեսակները:

Միաժամանակ ցուցադրվել են կինոնկարներ հայկական կերպարվեստի մասին, հնչել է հայկական երաժշտություն: Ցուցահանդեսը տևել է երկու օր:

«Հայրենիքի ծայն», 17 հունիսի 1981

Ո Ի Ր Ո Ի Գ Վ Ա Յ

Հայերը Ուրուգվայ են գաղթել 1922—1926-ի շրջանում, նրանց թիվը այժմ 10—12 հազար է: Հայ համայնքն ունի իր եկեղեցին, կառուցված 1964—65-ին, նուպարյան-Ալեք Մանուկյան գրուրոցը 500-ից ավելի աշակերտներով: Դպրոցին կից գործում է ազգային ներսեսյան վարժարանը՝ 120 աշակերտով: Մոստեվիդեոյի հայ դպրոցն ունի մի քանի սաղիոժամեր:

«Լոր օր», 20 փետրվարի 1981

Ա. Մ. Ն.

Միացյալ Նահանգների Փրովոն քաղաքում «Սուր լեյք Սիթի» մշակութային պալատում բացվել է միջազգային ցուցահանդես՝ հանրությանը ծանոթացնելու համար պատմական արժեք ներկայացնող հայկական հուշությունների հետ:

Ցուցադրված են հայկական հնադարյան քաղաքակրթության, ճարտարվեստի, մշակույթի, գրականության վերաբերյալ ձեռագրեր, գորգեր, հնագույն մետաղյա դրամներ, արծաթյա և ոսկյա զարդեր, նկարներ, ինչպես նաև Ս. Գրքի

հայերեն թարգմանության առաջին հրատարակություններից մեկը: Ցուցահանդեսի կապակցությամբ բանախոսել է Օդրի Մեկերյանը, որը նկարների և միկրոֆիլմերի հավաքածուները անձամբ լուսանկարել է այցելելով Նյու Յորքի, Լոնդոնի, Փարիզի, Վենետիկի, Բուխարեստի, Հոմի, Աթենքի, Պոլսի, Երուսաղեմի և Մոսկվայի ու Երևանի մշակութային կենտրոններն ու թանգարանները: Ցուցահանդեսը կազմակերպել են Նեֆի Գեչկրյանը, Ժորժ Աբոշյանն ու Օդրի Մեկերյանը:

«Շարժում», 3 դեկտեմբերի 1983

«Նաիրի» շաբաթաթերթը հրատարակել է մի թղթակցություն (արտատպել է «Նոր օր» թերթը) այն մասին, թե 1920 թ. Անգլիայում ցուցադրվել է հայկական ցեղասպանության վերաբերյալ մի ֆիլմ, որը կոչվել է «Հոգիներու աճուրդը»: Այս մասին համապատասխան նյութեր է հայտնաբերել սփյուռքահայ գրող Վահրամ Մամյանը: Պարզվում է, որ 1920 թ. Լիսաբոնում լույս տեսնող «Վիկտորիա» օրաթերթի հունվարի 23-ի համարում տպագրվել է մի հարցում «Հայաստանի նահատակությունը» խորագրով, որտեղ ասված է, թե «Ազգերի կիկայի ընկերակցությունը, որուն նախագահն է Լորտ Կրեյ, իսկ պատվակալ նախագահները՝ պոլ-Պալֆուր և Ասքլիտ, հանձն են առած այս ուշադրալ ժապավենը Լոնդոնի հասարակությանը ներկայացնելու պատասխանատվությունը»: Ժապավենը, որ նվիրված է 1915-ի լեզոնին, ստեղծված է լորդ Բրայսի կողմից դաշնակից կառավարություններին ներկայացված տեղեկագրի հիման վրա: «Ժապավենը կպարունակե իսկապես ցնցող տեսարաններ Ասոցմե մեկը, օրինակ, ցույց կու տա խոշոր փայտյա խաչերու վրա խաչված տասնչորս կիներ»:

Լոնդոնի Թայմզը ևս 1920 թ. հունվարի 19 և 20 համարներում գրել է, թե «Հոգիներու աճուրդը» ֆիլմը, որ մեծ մասամբ հիմնված է լորդ Բրայսի «տեղեկագրին» վրա և կներկայացնեթուրքերու բարբարոս վերաբերումը հայերու հանդեպ: ...Ֆիլմը ցույց պիտի տրվի շաբաթը երկու անգամ սկսելով հաջորդ երկուշաբթի, 26 հունվարին: Ֆիլմը քանի մը ամիս առաջ մասնավորներու ցույց տրվեցավ Լոնդոնի մեջք ...Ջանադան շրջանակներու մոտ այն կարծիքը կա, թե ֆիլմը, որ ամերիկյան արտադրությունը մըն է՝ պատերազմի միջոցին հայերուն հանդեպ թուրքերուն վերաբերումը արտահայտող, հարմար չէր սովորական պատկերասրահներու մեջ ընդհանուր հանրության ցուցադրելու: ...Ներքին գործոց նախարարը առարկություն բարձրացուցած է որոշ հատվածներու դեմ և հրահանգած ոստիկանապետին՝ դատական հետապնդումի ձեռնարկել, եթե ֆիլմը հրապարակալ ցուցադրվի...»:

«Լոր օր», 5 դեկտեմբերի 1980

«Արևը» հայտնում է, որ Կալիֆոռնիայի «Լոս Անջելոս Թայմզ» օրաթերթի 1980 թ. հունիսի 8-ի համարում լույս է տեսել Պելլա Սթամպոյի ծավալուն հոդվածը Լոս Անջելոսի հայկական գաղթօջախի մասին:

Այդ հոդվածում, որ Ա. Յափուճյանի թարգմանությամբ տպագրվել է «Արևում», մասնավորապես խոսվում է 1915 թ. եղեռնի մասին: «Աշխարհի սարսափահար աչքերուն առջև, հայերը թուրք ղեկավորներուն կողմն կոտորվեցան իրենց գյուղերուն մեջ, կամ զանգվածաբար տեղահան եղան, թշվառ ղեկավարապետ «մահվան երթերը», դեպի Սուրիական անապատին կեղերնացման ճամբարները: Մեծամասնությունը ճամբան մեռավ ծարավն կամ ուժասպառութեն: Առաջին համաշխարհային պատերազմի վերջավորության սպանված հայերուն թիվը կգնահատվի մեկուկես միլիոն—կեսը այն ատենվան ամբողջ աշխարհի հայություն... Այսօր, ամբողջ աշխարհի հայերուն թիվը կգնահատվի վեց միլիոն... Երեք միլիոն սփռված է Միջին Արևելքի և Եվրոպայի մեջ, իսկ 500 000 ալ մոտավորապես՝ Մ. Նահանգներուն մեջ»:

«Արև», 7, 8, 9 հունվարի 1981

Նյու Յորքում հունվարի 20-ին մահացել է հնագետ, հայկական արվեստի գանձերի հավաքող ու պահպանող Հարություն Հազարյանը: Նա իր հավաքածուից բազմաթիվ հայկական ձեռագրեր է նվիրել Մաշտոցի անվան Մատենադարանին:

«Ջաբոնֆ», 8 փետրվարի 1981

Բոստոնի Ուայտնըր գրադարանում կազմադրվել է 1900—1930 թթ. Բոստոնում տպագրված հայերեն գրքերի ցուցահանդես:

«Արև», 16 փետրվարի 1981

Լոս Անջելոսում սկսել են լույս տեսնել հրեշտակյան կուսակցության օրգան «Մասիս» շաբաթաթերթը և Հայագիտական ամբիոնի և Հայուսանողների միության «ՏՀՏ Արմինիոն» Հորայզոն» անգլերեն պարբերաթերթը:

«Ջաբոնֆ», 8 փետրվարի 1981

Կալիֆոռնիայի հաշտությունը մեծագույն շուքով հիշել է Մեծ եղեռնի 66-րդ տարեդարձը: Լոս Անջելոսի հեռուստատեսությամբ ցուցադրվել է «Հայկական ցեղասպանություն» ֆիլմը, Հարավային Կալիֆոռնիայում բողոքի ժողովը: Դական ցույց է տեղի ունեցել թուրքական դեսպանության առջև: Հուշահանդեսներ են տեղի ունեցել Ֆրեդնոյում, Սան Ֆրանցիսկոյում, Մանտա Կարայում, Սան Դիեգոյում և այլուր:

«Նոր օր», 24 ապրիլի 1981

Մայիսի 12-ին 72 տարեկան հասկում մահացավ վիլյամ Սարոյանը: Սփյուռքահայ թերթերը բազմաթիվ նյութեր են տպագրել մեծ գրողի մասին:

«Նոր օր», 22 մայիսի 1981

Միչիգանի էն Արպըր համալսարանում ապրիլի 5-ին բացվել է Ալեք Մանուկյան հայագիտական ամբիոնը: Համալսարանի նախագահության հրավերով հանդիսությանը մասնակցել են հարյուրավոր հյուրեր, անվանի գործիչներ, ուսանողներ:

«Ջաբոնֆ», 6 հունիսի 1981

Դետրոյտի կենտրոնական հրապարակում հունիսի 21-ին 2500 հայերի և ամերիկացիների մասնակցությամբ կատարվել է Կոմիտասի հուշարձանի բացումը: Այս գործը ձեռնարկել է ազգասեր Մանուկ Ասարյանը:

Բացման հանդիսությանը ելույթ ունենալով, Դետրոյտի քաղաքապետ Քոլմեն Յանկը ասել է, որ «Դետրոյտի նման զորացող քաղաք մը ավելի ևս կզորանա հայերու մասնակցությամբ և Կոմիտասի արձանով»: Ելույթ են ունեցել նաև Միչիգանի կոնգրեսմեններից Զիմ Պլենչերտը, ծերակուտական Քարլ Լեվին, որը խոսելով հայկական ցեղասպանության մասին, ասել է. «Մենք կհիշենք Հայկական ցեղասպանությունը ու կմիանանք մեր հայ եղբայրներուն՝ բարձրացնելու համար Կոմիտասի այս կոթողը, որպեսզի համայն մարդկությունը ևս մեղի հետ հավերժորեն հիշե դարձուս առաջին ցեղասպանության զոհերը»:

Այնուհետև Կոմիտասյան երաժշտության հնչյունների տակ հայկական տարազներով հայ աղջիկը և պատանին իջեցրել են սպիտակ կտավը և «Իր ամբողջ հասակով պարզվեցավ Մեծ վարդապետը, տխուր բայց հպարտ»:

«Նոր օր», 30 հունիսի, 7 հուլիսի

«Ջաբոնֆ», 28 հուլիսի 1981

Ռիչարդ Տիրան Գլույանի «Հայկական ցեղասպանությունը. XX դարու առաջին շարժերը» 300 էջից բաղկացած գիրքը ընդգրկում է 1914—1922 թվականների հայկական ջարդերին վերաբերող «Նյու Յորք Թայմզի» և շուրջ երկու տասնյակ այլ պարբերաթերթերի հոդվածները, գրված պետական պաշտոնյաների, միսիոներների և այլ ականատեսների կողմից: Հատորում կան բազմաթիվ նկարներ, քարտեզներ, դետեյլված է Լորդ Բրայսի տեղեկագիրը՝ լույս տեսած 1916-ի Կոյեմբերին «Current History» պարբերաթերթում և դեսպան Հենրի Մորգենթաուի հայկական ջարդերի վերաբերյալ տեղեկագիրը՝ լույս տեսած 1918-ի Կոյեմբերին «The World Work» պարբերաթերթում:

«Հորիզոն», 11 մայիսի

«Լրաբեր», 4 հուլիսի 1981

Հուլիսի 26-ին Ֆրեզնոյի Քրնվենշըն Սենթրը թատրոնում հայ և ամերիկացի հանրաժանոթ դրողների և արվեստագետների նախաձեռնությամբ տեղի է ունեցել Վիլյամ Սարոյանի հիշատակին նվիրված հանդես, որին մասնակցել են շուրջ 2500 հայ և օտար հանդիսականներ:

Սարոյանի ստեղծագործությունների մասին գնահատանքի խոսք է ասել միջազգային համալսարանի արժանացած շքեղադասուց, բանաստեղծ Զարկ Կես Քերրիկոն, այնուհետև Սարոյանին յոթնակից ճանաչող բանաստեղծուհի Անիթա Քորնֆիլդը, Ֆրեզնոյի համալսարանի լրագրության ամբիոնի վարիչ Ռոնալդ Թաթարյանը, նույն համալսարանի գրականության ամբիոնի վարիչ Ֆիլիպ Լավին և Սարոյանի մտերիներից Դավիթ Խերտյանը հետաքրքիր դրվագներ են պատմել մեծ դրողի կյանքից: Հանդեսին մասնակցել են հատկապես հրավիրված Հայաստանի Գրողների Միության վարչության առաջին ֆարուղար Վ. Պետրոսյանը և երգչուհի Լուսինե Զաքարյանը: Անվանի դերասանների և արվեստագետների մասնակցությամբ տեղի է ճուխ համերգ, բեմադրվել են հատվածներ Սարոյանի թատերգություններից: Ֆրեզնոյի շատ թերթեր անդրադարձել են այդ միջոցառմանը: Ռադիոն և հեռուստատեսությունը հաղորդումներ են տվել Սարոյանի հիշատակին կաղմակերպված այդ հուշ-երեկոյի մասին:

«Արքունի», 13 օգոստոսի 1981

Պենսիլվանիայի համալսարանի պրոֆ. Վահե Ղազարյանի և Փիլիպինդի համալսարանի պրոֆ. Ջոն Գրեյպինը ծրագրել են Թուրքիայում և Նիդրլանդում XIX դարում լույս տեսած հայ Դամուլի մի մասի պատճենները հանել միկրոֆիլմով: Մի շարք թերթեր այնքան հին ու մաշված են, որ անհրաժեշտ է միկրոֆիլմ դարձնելով երկի կոստից: Վ. Օրադանն ու Ջ. Գրեյպինը Շաբուլի մեջ հայտարարություն են հրապարակել, որով հայտնում են, որ տարիների անք պահանջող այս աշխատանքի համար օգություն կարիք են դրում:

«Շաբուլ», 23 սեպտեմբերի 1981

Միլիզանի համալսարանի հայագիտական մերիտը սլավոնական լեզուների և գրականության բաժնի մասնակցությամբ Ալեք և Մարի Կանուկյան հիմնարկության օգնությամբ կադակերպել է իր անդրանիկ ցուցահանդեսը՝ հայական ճարտարապետության կոթողները թնայով: Այս ցուցահանդեսը, որ բացվել է Հայաստանի արվեստի և ճարտարապետության ներքում սեպտեմբերի 12—21-ը, մասն է կադում Միլանի հայ մշակույթի ուսումնասիրությունների կենտրոնի կողմից Հյուսիսային Ամերիկայի հայաշատ կենտրոններում կայանալիք ուցադրությունների շարքի: Մինչ այդ ցուցա-

հանդեսը ներկայացվել է Կոլումբիայի և Հարվարդի համալսարաններում, իսկ Միլիզանից հետո պետք է փոխադրվի Կալիֆորնիա:

Ցուցադրությունը բաղկացած է 155 նկարներից, քարտեզներից և հատակագծերից, որոնք ներկայացնում են IV—XVII դդ. հայկական հուշարձաններ:

«Պայքար», 14 հոկտեմբերի 1981

1980 թ. Վաշինգտոնում ստեղծվել է հայկական գորգագիտության միություն, որին անդամակցում են հայկական գորգարվեստի հետ առնչվող մտավորականներ, արվեստաբաններ, գորգավաճառներ:

Միությունը ցուցահանդեսներով, դասախոսություններով և հայկական գորգարվեստին նվիրված ալբոմների և գրքերի հրատարակությամբ նպատակ ունի ճշգրիտ պատկերացում տալու հայկական գորգարվեստի մասին, ճշտելու նրա ակունքներն ու զարգացման փուլերը: Անցյալ տարի կաղմակերպվել է միության առաջին ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվել են թանգարաններում և գորգավաճառների մոտ պահվող հայկական արձանագրությամբ XIX դարի և XX դարի սկզբի գորգեր, լավել են զեկուցումներ Պոլսի Գում Գափուի գորգերի, Արևմտյան աշխարհում հայկական գորգի տարածման գործում հայ վաճառականների դերի, հայկական հիշատակագրեր ունեցող գորգերի, հայկական վիշապագորգերի մասին և այլն:

1981 թ. հոկտեմբերին Բոստոնում գումարվել է միության երկրորդ համաժողովը: Միությունը ձգտում է սերտ կապեր հաստատել Սովետական Հայաստանի հետ:

«Հայրենիքի ձայն», 4 նոյեմբերի 1981

Միլիզանի օպերային թատրոնում ներկայացվել է Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան անգլերեն: Այդ ներկայացումն իրագործելուն օգնել են թատրոնի տնօրեն ղոկտոր Դիկիերան, Միլիզանի հայկական համայնքը, հատկապես Ալեք Մանուկյան մշակութային հիմնադրամի ատենապետ Նրվանդ Ադատյանը, Հայաստանի Սփյուռքահայության կոմիտեն: «Անուշի» թարգմանիչն ու բեմադրողն է Երևանի զեղարվեստաթատերական ինստիտուտի շրջանավարտ Ժիրայր Բաբաջանը, որպես դիրիժոր հրավիրվել է Կանադայի օպերային թատրոնի դիրիժոր Բամբանյանը, զերերի համար հրավիրվել են ամերիկյան տարբեր օպերային թատրոնների երգիչ-երգչուհիներ: Օպերայի բեմադրությունն անցել է մեծ հաջողությամբ: Ներկայացման առթիվ գրվածական հոդվածներ են տպագրվել Դետրոյտի մամուլում և Շվեյտ Յորք թաթառում:

Ն. ՎԱՐԳՍՆՅԱՆ